

դարի թաղն, Մաթուլայ թաղն: զ [= 6] օր էլ ասոնք կռիւլ ա-
րին. վերջապէս բօլանդակ օսմանցին առաւ քաղաքն. անչաբ
զերի արին որ ոչ ունի համբար, անքնընելի, անհասար, որպէ
զերի վարեցին: Ահմատ փաշէն եկ ի մէջն քաղաքի, հրայման
ետ թէ՛ «էդ ըսպանաց մարդիքըն քաղաքիցն դուս քաշեցէք, որ
քաղաքի մէջն հոտ չընի», որ այչաբ մարդ սրօլ անսաւ խանե-
րումըն մօլթանիին ըսպանել որ անթիւ, որ հայոց բառ՝ կօլայ-
պաշտ, օսմանցու լեզւով՝ գուրի, պարսի լեզոյ՝ մօլթանի. այս
որ ասացանք որ շատ կօտորւել էր. ոսկին կամ արծաթն փողն՝
խալէջոնց տակ են մնացեալ, յարունի հետ խառնեալ փողն կամ
դրամն, ոսկեղէն կամ արծաթեղէն, մնացեալ էր այսպէս անտէր,
որ այնչաբ դրամ վեր առաւ օսմանցի՝ որ արծաթ դրամն տես-
նէր վեր ձղաց, ոչ վեր առնէ, որ այնչաբ գանձի տէր եղաւ
օսմանցին:

ձերում: Եւ դուք էք տիրողք եւ խնամարկուք ազգին մերոյ. եւ
արդ ձեր եմք մեք եւ ընդ տէրութեամբ եւ խնամօք ձերովք կե-
ցեալ ծառայք եմք եւ պարծիմք ի տէրութիւն ձեր: Եւ արդ
յայսպիսի աւուրս մեծի յաղթութեան քոյ, ընդ որ յոյժ ուրա-
խանամք, շնորհեսցես մեզ զնոսա, որք յազգէ մերմէ են, վասն
կենաց քոց, զի ամենայնիւ ուրախ լիցուք ի մեծի ցնծութեան
աւուրս այսորիկ: Ընկալաւ զաղաչանս նոցա փաշայն եւ հրա-
մայեաց ի բաց արձակել զամենայն հայ դերիսն. եւ եղեւ նոցա
ուրախութիւն մեծ: Բայց ոչ ամենեցուն եղեւ ազատիւ, զի ո-
մանք թողին ազատ, եւ ոմանք՝ ոչ: Արդ, Ահմէտ փաշայն ամ
մի նստաւ ի Համատան եւ յետ այնորիկ առաքեցաւ ի Բաղտատ:

(Շար. 3)

Հրտ. Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

ՔԵՍՈՒՆԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

(Շար. տե՛ս «Բագմալէպ» 1975, ք. 1-2, էջ 132-159)

«ԿԱՐՄԻՐ» ԵՒ «ՇՈՒՂՐ» ՎԵՐԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Տեսնելէ յետոյ Կարմիր Վանքին տեղադրականը, անցնինք այժմ
քննելու կարեւոր ուրիշ երկու հարցեր:

Կարմիր Վանքին տեղադրութեան հետ, սերտօրէն կ'առնչուին
նաեւ Քեսուռի այս վանքին կցուած ԿԱՐՄԻՐ եւ ՇՈՒՂՐ անուանա-
կոչումները: Ի՞նչ պատճառներով արդեօք վանքը կրած է նաեւ այս
զոյգ կոչումները:

Տէր Ղազարեան, մեզի անծանօթ պատճառներով, կը լռէ այս
մասին: Նոյն լուրքեան մէջ են նաեւ այն հեղինակները, որոնք որեւէ
պատճառով Կարմիր Վանքին չուրջ անդրադառնալու առիթն ունե-
ցած են: Հ. Ալիշանն է, որ ենթադրաբար կը փորձէ Կարմիր Վանքը
միացնել կամ զետեղել Կարմիր կոչուած լեռան մը կողմերը: Սակայն
վերջնական եզրակացութեան մը չի յանդիւր, եւ Կարմիր լեռան ակ-
նարկելով կ'աւելցնէ՝ թէ «Պնդրելի են եւ աստ վանք ի նոյն անուն
լերինն»⁶⁴: Ուրեմն, ինչպէս կ'երեւի, Հ. Ալիշան Կարմիր Վանքը
աշխարհադրականօրէն կ'որոնէ Կարմիր լեռան շրջանակին մէջ:

Գարեգին Սրուանձտեանց գտած է յիշատակարան մը, 1223 թը-
ւականէն, որուն պարունակութիւնը կը խորհինք թէ որոշ կապակե-
ցութիւն մը կրնայ ունենալ Հ. Ալիշանի արդարացի ենթադրութեան
հետ: Յիշատակարանը կ'ըսէ. «Գրեալ է ի լեառն Կարմիր. ի մենաս-
տանն ուխտիս որ է անուն Աստուածամաւր. ի կաթողիկոսութեան
Տեառն Կոստանդիայ, եւ ի ժամանակս մեծի արքային Փիլիպպոսի,

64. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուան, նոյն, էջ 164:

ի թուա. Ո.Հ.Բ. (= 1223) ...»⁶⁵: Հեթում Պատմիչ ալ, իր կարգին, կը յիշէ Կարմիր լեռը, դրելով «Թու. ՇՁԷ. (= 1038) եկն Ահմատ Մելիքն, եւ առ զԼեւոնին տեղիքն ի Հոռմէն (այսպէս), զՎահկայն եւ զԿապանն եւ զԿարմիր լեռն»⁶⁶:

Պօղոսեան, որ Հաճընի Պատմադիրքին խմբագիրն է, այս մասին լուծում մը կ'առաջարկէ՝ ըսելով. «Պատմութեան մէջ յիշատակուած եւ Վահկայի ակնարկուած Կարմիր լեռան նշանաւոր Կարմիր Վանքը, շատ հաւանական է որ հոս Գըզըլ Եէրի մէջ կը գտնուէր»։ Իսկ Գըզըլ Եէրն ալ կը դասէ Վահկա բերդին հիւսիսային շրջանակին մէջ, Հաճընի հարաւ-արեւմտեան կողմը⁶⁷: Այս կարծիքէն է նաեւ Կիլիկիա հատորին հրատարակիչը, որ իր մտածումը սա տողերով կ'արտայայտէ. «Պատմական հին հիմնարկութիւններէ կաստաղոնի ուխտը, ուր թաղուել են Ռուբէն եւ Կոստանդին իշխանները, նոյնպէս եւ համբաւաւոր Կարմիր լեռին վանքը՝ հաւանական է թէ այս տեղերում էին», այսինքն՝ Վահկա բերդին շրջակայքը⁶⁸:

Պօղոսեան եւ «Կիլիկիա» հատորին հրատարակիչը (անանուն) ո'չ պատմական եւ ո'չ ալ ակնատեսի համոզիչ փաստեր ունին իրենց այդ վարկածը հիմնաւորելու համար: Իրենց մտածումը կը մնայ զուտ ենթադրութեան շրջափոխին մէջ, որովհետեւ բառացի հետեւած են Հ. Ալիշանի անորոշ նշումներուն: Վահկա բերդին հետ յիշուող Կարմիր լեռան յիշատակութիւնը եւ Գըզըլ Եէր անունին նոյնութիւնը՝ չեղած է իրենց ուղղութիւնը, այդ շրջանակներուն մէջ տեղաւորելով Կարմիր Վանքին աշխարհագրական դիրքն ալ: Հ. Ալիշան, պատմական վստահելի վկայութիւններու չգոյութեան պատճառով, փորձած է Կարմիր լեռը Վահկայի շրջակայքը հետազոտել: Սակայն կ'արժէ Հ. Ալիշանի այդ հատուածն ալ իր ամբողջութեամբ արտատպել հոս, տեսնելու եւ համոզուելու համար թէ ինչպէս որոշ վերապահութիւն մը կը դնէ իր արտայայտութեան մէջ: Ահաւասիկ այդ հատուածը. «Ո'չ հեռի ի կողմանցս՝ ուր ամուր վայրքն էին Պարոնին Լեւոնի, նախայիշեալքն Յախուտ եւ Վահկա եւ այլք, համարիմ եւ զյիշեալն ի պատմէն համակարգ նոցին զԿարմիր լեռն. թերեւս կոչեցեալն արդ յայլազգեաց Գըզըլ Տաղ, զոր ի վեր անդր յիշեցաք եւ այլուր, զատ ի Գըզըլ Թէփէ անուանելոյն. եթէ մի ի

65. ՄՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ Գ., Թորոս Ագաթ... , հտ. Բ., Կ. Պոլիս, 1884-1885, էջ 388, ընդգծումը մերն է: Այս Յիշատակարանին առաջին մասը հրատարակած է նաեւ Հ. Ալիշան, Սիսուամ, էջ 536:

66. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուամ, էջ 52:

67. ՊՕՂՈՍԵԱՆ Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը, Լոս Անճէլէս, Գալիֆորնիա, 1942, էջ 59. տեսնել նաեւ հատորին սկզբնական բաժինին մէջ գետեղումը քարտէսը:

68. Կիլիկիա, Մատենադարան «Արաբոյի», էջ 310:

սոցանէ եւ եթէ այլ՝ Կարմիրս այս Լեւոն ծանօթ նախնեաց մերոց, ոչ լոկ անշէն վայր էր բնական, այլ եւ ամուր տեղի ապաւինի. եւ զոր օրինակ յայսպիսի անփոք տեղիս՝ սովոր էին եւ տեաք տեղեացն եւ յարեալքն ի նոսին՝ հաստատել եւ կայանս աղօթից եւ ընթերցմանց, խնդրելի են եւ աստ վանք ի նոյն անուն լեռին: Չայս հաւաստէ մեզ բան մի Ստեփ. Ուսպելեան՝ ի թղթին առ Գրիգոր Ա. նաւարդեցի կաթողիկոս, այսպէս գրելով. «Յորժամ էր մեր նուաստութիւնս առ ձեր փառաւորութիւնդ, որ եւ վանակամք կողման կարմիր լեռնն՝ զականջս մեր խիտ առ խիտ տաղտկացնէին. որ եւ յայսպիսի բաղադրանաց փաստ առեալ աստուածապսակ թագաւորին (Լեւոն Բ.) եւ բնաւին ժողովոյն՝ ոչ օծին զընտրեալդ ի Հոգւոյն» (յամի 1286), յետ մահուան Յակոբայ կաթողիկոսի: Թէպէտ յայտ կողման երկրիս, եւ թէպէտ մերձագոյն յԱնաւարդա՝ ի Թեմի Գրիգորի՝ էր վանատեղի Կարմիր լեռն, մեզ հարկ էր յիշել միանգամ, եւ ապազայից թողուլ զընտրութիւն եւ զստուգութիւն»⁶⁹:

Այս հատուածին մէջ նկատի պէտք է առնել Հ. Ալիշանի կողմէ դարմանալի գուշակութեամբ մը Կարմիր լեռան նոյնացումը Գըզըլ Տաղի հետ⁷⁰:

Կը խորհնք թէ «Գըզըլ Եէր» Կարմիր վայր կոչումով տեղ մը կրնայ իրապէս գոյութիւն ունեցած ըլլալ Վահկայի հիւսիս-արեւմտեան կողմերը, սակայն անուններու մերձակոթեան պատճառով, հարկ չկար հեռաւոր մենաստան մը տեղափոխել մինչեւ Վահկա բերդին շրջակայքը, երբ անդին, պատմական որոշ հեղինակութիւններ, ինչպէս Ուսպելեան, Շնորհալի, Սմբատ Սպարապետ եւ այլ Յիշատակարաններ՝ «մերձ ի Քեսուն», «հուպ ի Քեսուն» եւ նրման արտայայտութիւններով, բացայայտօրէն արդէն Քեսուն քաղաքին մօտակայ վայրերուն մէջ կը գտնուեն Կարմիր Վանքը:

Շատ տրամաբանական պիտի ըլլար, հետեւաբար, Կարմիր Վանք անունը կրող մենաստանը որոնել Քեսունի մօտերը, եւ եթէ անոր անունը կապակցութիւն մը կրնայ ունենալ Կարմիր լեռան հետ, այս վերջինն ալ, այդ պարագային, լաւ պիտի ըլլար Քեսունի մօտերը փնտռել:

Ըսինք նախապէս, մեր աշխատութեան առաջին մասին մէջ, թէ Գարատաղ լեռան ճշգրիտ վայրը ճշտելու համար, Սեւ Լեռն առնչութեամբ, աչքի առնել ունեցած էինք ամերիկեան կարեւոր հրատարակութեան մը զոյգ ընտիր քարտէսները, մէկը տպուած 1956ին, իսկ միւսը 1958 թուականին: Առաջին քարտէսէն կատարեցինք արտատպում մը՝ առնելով միայն արեւելեան Կիլիկիոյ մեզ հետաքրքր-

69. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուամ, էջ 104, ընդգծումները մեզմէ:

70. Հմտ. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Նոյն, էջ 158 եւ 139:

քրոշ շրջանակը. իսկ երկրորդին, որ շատ աւելի խոշորացուած քարտէս մըն է եւ լեռնային գօտիներն ու դադաթներն ալ մանրամասնօրէն նշանակած, իրենց ճշգրիտ դիրքերով, առինք KARADAĞ, եւ Keysunի ճիշտ կողքին՝ KIZIL DAĞ = ԿԱՐՄԻՐ ԼԵՌ, իսկ մեր կողմէն ալ KIZIL DAĞի վրայ, զետեղեցինք Կարմիր Վանքը: Թիւրք-մացութեան եւ անհասկացողութեան առջեւն առնելու մտադրութեամբ, դարձեալ կ'ուղէինք շեշտել եւ նկատողութեան յանձնել որ երկրորդ քարտէսին մէջ, այն որ 1958ին տպուած է ըսինք, Քեսունի (Keysun տպուած) շրջանակին մէջ, չըսելու համար գրեթէ ճիշտ նոյն դիրքին վրայ, շատ յայտնի եւ մեծ տառերով KIZIL DAĞ անունով լեռ մը կամ բարձունք մը նշանակուած է. ա'յս է որ գործնականապէս աւելցուցինք մենք՝ առաջին քարտէսէն կատարած մեր արտատպումին վրայ: Ըսածնիս լիովին կը զօրէ նաեւ KARADAĞ լեռան համար ալ: Հետեւաբար աշխարհագրական այս զոյգ անունները – ԳԱՐԱ ՏԱՂ եւ ԳԸԶԸԼ ՏԱՂ – երկրորդ քարտէսէն է որ անցուցած ենք մեր արտատպումին վրայ: Իսկ մեր կողմէն ալ, ինչպէս ըսինք, աւելցուցած ենք միայն ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ անունը՝ Գըզըլ Տաղի կողքին: Եւ այս երեք անունները տպած ենք մեծատառ:

Այս կէտին մեզի օգնութեան կը հասնի նաեւ Վեր. Եղիա Քասունի, որ կը գրէ թէ «Կոմմադենէի մէջ, Մարաշի եւ Սամոսատի գրեթէ ճիշտ մէջտեղը՝ իւրաքանչիւրէն 75 մղոն հեռու եւ Գըզըլտաղ լեռնաշղթային հիւսիսային գագաթափին վրայ մեծ գիւղ մը կայ Քեսուն անուն»⁷¹:

Քասունին տեղեակ է, ուրեմն, թէ Քեսուն քաղաքի մօտ կը գտնուի Գըզըլ Տաղ = Կարմիր Լեռ անունով լեռնային բարձունք մը: Մանաւանդ թէ Քասունի շատ յստակ կերպով կ'արտայայտէ իր ծանօթութիւնը այդ ուղղութեամբ, գրելով. «Քեսնոյ անմիջական մօտաւորութեան մէջ էին Կարմիր Վանք եւ Շուղր զոյգ մենաստանները, որ այս ատենէն արդէն հայ դաստիարակութեան ու դպրութեան ամենափայլուն վառարաններն էին, եւ քիչ յետոյ Հայ Կաթողիկոսութեան կեդրոնական նիստն ալ եղան: Արդի Գըզըլտաղ, Սեաւ լեռանց մաս, եւ հաւանօրէն ասորիներու «Ձորաք Լեռ» կոչածը, որ իր հիւսիսային կողմին վրայ կը կրէր յիշեալ զոյգ մենաստանները, ժամանակակից հայ պատմիչներու կողմէն «Սուրբ Լեռ» կ'անուանուի»⁷²:

Անդրադոյն լուսարանութիւն մը աւելորդ կը նկատենք այլեւս, երբ վստահելի աղբիւրներ տրամաբանական լուծում մը կը հայթայթեն մեզի, լուծում մը՝ որ իրականութեան կը համապատասխանէ:

71. «Ակոս», Ե. (1948), թիւ 5, էջ 101, ընդգծումը մերն է:

72. «Ակոս», նոյն, էջ 110:

Ամերիկեան այդ կարեւոր քարտէսին վկայութիւնը, հետեւաբար, մեր համեստ կարծիքով, կարելի չէ անտեսել, ինչպէս կարելի չէ անտեսել, նմանապէս, Քասունիի վերոյիշեալ զոյգ հաղորդումները, որոնք ճշգրտօրէն, ինչպէս յայտնի է, կը համաձայնին քարտէսին վստահելի մատնանշումին: Այս բոլորը, ուրեմն, կը հաստատեն թէ, Քեսուն քաղաքի կողքին, Պեհսնիէն հարաւ, կը գտնուէր լեռ մը, բարձունք մը, լեռնային գօտի մը, որուն անունը ԿԱՐՄԻՐ ԼԵՌ = ԳԸԶԸԼ ՏԱՂ էր⁷³:

Մեկնելով այս ծանօթութիւններէն, շատ բնականօրէն մենք ալ սա եզրակացութիւնը կատարելու իրաւունքը կը ստանանք. Քեսուն քաղաքին շատ մօտիկ վայրի մը մէջ գտնուող այս նշանաւոր Կարմիր Վանքը, իր անունը պէտք է որ իր շրջանակէն եւ դիրքէն ստացած ըլլայ (Կարմիր լեռ՝ հաւանօրէն կարմրահող ենթախաւին համար), եւ այդ պատճառով ալ կոչուած ԿԱՐՄԻՐ Վանք⁷⁴:

* * *

«Կարմիր» կոչումին գոհացուցիչ բացատրութիւն մը տալէ յետոյ, այժմ անցնինք «Շուղր»ի վերակոչումին շուրջ հարկ եղած լուսաբանութիւնները կատարելու:

Հ. Ալիշան Կարմիր Վանքին հետ առնչուող բոլոր պատմական ծանօթութիւնները հաւաքած եւ զետեղած է ՇՈՒՂՐ ԱՆԱՊԱՏ անունին տակ. իսկ Շուղր Անապատի բուն տեղին շուրջ՝ ենթադրութիւններ կ'ընէ հետեւեալ տողերով. «Ոմն ընդմէջ Մարաշոյ եւ Սսոյ ասէ, ոմն հեռի Քեսնոյ, Դիկ այլ ոմն ի հնոց ստուգադոյն տայ նշան ըստ իւրում գիտութեան, «մերձ ի Նոր քաղաք» ասելով. այլ աւա՛ղ, զի անծանօթ է մեզ եւ տեղի Նորոյ քաղաքիդ»⁷⁵:

73. ԱՐՍԼԱՆԵԱՆ Գ., որ «Պատառիկներ լուսածիր շափաքացեալ վանքերէն» խորագիրով տեղագրական հաղորդումներ ունի, երբ կարգը Մելիտիէի շրջանակին մէջ գտնուող աւերակ վանքերու մասին կու գայ, Կարմիր Վանքին համար ալ կը գրէ. «Հին օրերուն մէջ վանքերուն նշանաւորներէն է եղած. հին Մելիտիէնէն երեք ժամու հեռավորութեամբ, իսկ նորէն՝ մէկ ժամու, հարք բլրակի մը երկայնքին ամբողջ կողմերում ու ռաբերում տակ կարմրահողերում փռուած է դարերով. այնչափ արգասաբեր հողերով համբաւեալ, նոյնչափ վանական կեանքով, դարուն ուսումնականութեամբ ու աշխատանքովը հռչակեալ», «Բազմավէպ», ԶԵ. (1937), թիւ 12, էջ 299, ընդգծումը մեզմէ:

74. ՍԱՐԱՖԵԱՆ Գ., արդարացիօրէն կը գրէ. «Ժողովրդական անուանակոչման նշանակութիւնը կրնանք հասկնալ ներկայ թուրք ժողովուրդի տուած անուններէն՝ լեռներուն եւ ջուրի հոսանքներուն: Ուր որ լեռան ժայռերը սկզբնապէս ունին՝ Գարա տաղ է, ուր որ կարմիր՝ Գըզըլ տաղ, եւ ուր որ սպիտակ՝ Ագ տաղ կամ Ագմա տաղ: Նոյն է ջուրի հոսանքներուն համար ալ. Ագսու կամ Գարասու, ջուրի գոյնին համեմատ»: Պատմութիւն Անթիպի Հայոց, էջ 203-204, ընդգծումները Հեղինակէն:

75. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Միտում, էջ 406-407:

Վարդան Պատմիչի Պատմութեան հրատարակութեան մէջ, Հ. Ալիշան աւելցուցած է Շուղը Անապատ յարեմտից հարաւոյ Մարաշու խնդրելի է» բացատրութիւնը⁷⁶:

Գալուստեան կը հաղորդէ իր կարգին՝ թէ Շուղը Անապատ Վանքը, «կը գտնուի Մարաշի արեւմտեան կողմը Տէօնկէյէէ եւ Եէնիճէ-Գալէէ անդին: Երբ 1907ի ամառը Տէօնկէյէի Պաշ-Գօնուշ լեռան կատարը բարձրացայ՝ ինծի ցոյց տուին Անապատին դիրքը: Այս վանքին շրջանակը այժմ կը կոչուի Իչ-Նահիէ, որ ո՛չ Կեալուր-Տաղըրի, ո՛չ Անտըրընի, ո՛չ ալ Զէյթունի ենթակայ է ու Նահիէյին կեդրոնն է Ենիճէ-Գալէ գիւղը»⁷⁷: Սակայն հարկ կը զգանք նկատել տալ իսկոյն, որ Գալուստեան այս բացատրութիւնները տալէ յետոյ, Շուղը Անապատն ու Քեսունի Կարմիր Վանքը իրարու հետ չփոխելով, առանց վարանումի զանոնք կը նոյնացնէ: Կը ցաւինք ըսելու որ Գալուստեանի կողմէ կատարուած այս ենթադրութիւնը հիմնովին սխալ է, ինչպէս պիտի անդրադառնանք արդէն ստորեւ:

Պէտք ենք ընդունիլ որ այս երկու նշանաւոր վանքերու տեղագրական դիրքի մասին, մեր միջնադարեան մատենագիրները տարտամ տեղեկութիւններ հաղորդած են մեզի. իսկ քանի մը նոր հեղինակներ ալ կատարեալ չփոխութեան մէջ մնացած են սա պարզ պատճառով, որ Շուղը անունով մէկէ աւելի վանքեր եւ վայրեր կան Կիլիկիոյ մէջ կամ Կիլիկիայէն դուրս, սակայն միշտ կիլիկեան սահմաններուն շատ մօտ վայրերու մէջ:

Այս ուղղութեամբ պէտք է համեմատել ընդունիլ որ մեծ արժանիք ունի Տէր Ղազարեան՝ Կիլիկիոյ տեղագրութեան բերած իր ակնաւորութիւններ ծանօթութիւններով եւ հաղորդումներով: Եւ իսկապէս Տէր Ղազարեան Շուղըի մասին կը գրէ. «Կիլիկիոյ սահմանին մէջ մենք ունինք մէկէ աւելի Շուղը-ներ: Նախ Տօնկալայի Շուղը, որ մեր մատենագրութեան մէջ իրական Շուղըն է, երկրորդ՝ Ֆրնուղէն գէպի Կոկիսոն յայտնի ձանձիկ բերդին մօտ ձորամէջի անցքը. եւ Զէյթունի միջնաբերդին հարաւային ստորոտի նեղ ձորամէջը իր կամուրջով կը կոչուի Շուղը Խանթարմա: Իսկ Կիլիկիայէն դուրս ունինք Քեսունէն Տարանտա ճամբուն վրայ նեղ կիրճ մը, որ նոյնպէս կը կոչուի Շուղը»⁷⁸:

Տէր Ղազարեան իրբեւ ակնաւորութեան կը շարունակէ տակաւին գրել. «Զորրորդ Շուղը մըն ալ ունինք Քեսունի մօտ, որ Կարմիր Վանքը եւ. «Զորրորդ Շուղը մըն ալ ունինք Քեսունի մօտ, որ Կարմիր Վանքը Կիլիկիոյ սահմաններէն դուրս՝ անունով ալ ծանօթ է: Կարմիր Վանքը Կիլիկիոյ սահմաններէն դուրս՝ Գող Վասիլի տիրապետած երկրին մէջ կը գտնուի, եւ միշտ յիշուած

76. Նոյն, էջ 116, ծանօթութիւն:

77. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԳՐ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, հրատարակ. Մարաշի ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՄԻՒՆԻՍԹԵՐՆԵՐԻ, Նիւ Եորք, տպ. Կոչնակ, 1934, էջ 234:

78. Տէր-ՂԱԶԱՐԵԱՆ Գ., Հայկական Կիլիկիա, էջ 56:

է «մօտ ի Քեսուն» Պէհեսնի մօտ: Աշոտի — Ալպիստանի ճամբուն վրայ գտնուող Արսլան Թաշն գէպի հարաւ լեռներու մէջ կը գտնուի չորս-հինգ տուններէ բաղկացած քրտական փոքրիկ գիւղ մը, ընդարձակ աւերակուած չէնքերու հողակոյտներուն վրայ, որ ծանօթ է մինչեւ այսօր Շուղը անունով. այս Շուղը գիւղը Քեսուն երկարող կիրճի մը մէջ շինուած է եւ Քեսունէն ոչ շատ հեռու. ահա այս Շուղըն է որ Շուղըի Կարմիր Վանք կը կոչուի պատմութեան մէջ: Պատմականորէն մենք ունինք ուրեմն երկու վանքեր, որոնք Շուղը անունը կը կրեն: Ասոնցմէ առաջինն է Շուղը Անապատը՝ Մարաշի մօտ, ուր Վկայասէր եւ Բարսեղ Կաթողիկոսներ իրենց օթեւանը եւ վեհարանը հաստատած էին. իսկ երկրորդը՝ Շուղըի Կարմիր Վանքը, որ Գող Վասիլի երկրին մէջ կը գտնուէր, Քեսունի մօտ, քիչ առաջ մեր յիշած Արսլան Թաշն գէպի հարաւ Քեսուն երկարող կիրճին մէջ»⁷⁹:

Ինչպէս յայտնի կը տեսնուի, Տէր Ղազարեան ակնաւորութեան համոզիչ փաստերով Շուղը Անապատը բացայայտելէն կ'անջատէ Քեսունի Կարմիր Վանքէն, այս վերջինիս ալ կցելով Շուղը անունը:

Մեր Պատմութեան մէջ Շուղը Անապատի առաջին յիշատակութիւնը կ'ըլլայ Գրիգորիս Վկայասէր Կաթողիկոսի առնչութեամբ: Վկայասէր ընդհանրապէս հոն կը բնակէր եւ կը զբաղէր իր թարգմանութիւններով: Այս Շուղը Անապատ վանքը, հետեւաբար, բոլորովին անջատ վանական հաստատութիւն մըն է Քեսունի Կարմիր Վանքէն, եւ Տէր Ղազարեանի ու Գալուստեանի ակնաւորութեան հաղորդումներուն վրայ հիմնուելով, կը գտնուէր Անտիբուրնի լեռնադաշտին մէջ, Մարաշն գէպի Սիս տանող ճամբուն վրայ, Ենիճէ Գալէ գիւղին մօտ, Հարունիէի ճիշտ դիմացը: Ջահան կամ ձիհուն գետը, այս կէտին վրայ նեղ կիրճի մը մէջէն կ'անցնի՝ անոր մօտէն: «Մինչեւ մեր զաղթականութեան տարին, կ'աւելցնէ Տէր Ղազարեան, Մայր եկեղեցին կամ վանքը կիսաւեր վիճակ մը կը ներկայացնէր, խորանին վրայի տանիքը դեռ հաստատուն կը կենար, բլրակին շուրջն ու ստորոտը բաղմամբիւ հիւրանոցներ կը գտնուէին՝ փլատակուած վիճակի մէջ»⁸⁰:

Օրմանեան եւ Զարբհանյան, Շուղըի անունին նոյնութեան պատճառով, չփոխութեամբ նոյնացուցած են Շուղըի Անապատը եւ Քեսունի Շուղըի Կարմիր Վանքը, առաջինը՝ «Շուղըի կամ Քեսունի Կարմիր Վանք» գրելով (ՕՐՄ.), իսկ երկրորդը՝ «Շուղը Անապատի Կարմիր Վանք» ըսելով (ԶԱՐԲ.):⁸¹:

79. Տէր-ՂԱԶԱՐԵԱՆ Գ., Նոյն, էջ 86:

80. Տէր-ՂԱԶԱՐԵԱՆ Գ., Նոյն, էջ 88 եւ 85:

81. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, էջ 1336, թիւ 917: ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ, Հ. Գ., Պատմութիւն հայ հին դարերու, 1932, էջ 616: Համար. Նաեւ ԱԲԵԼԵԱՆ Մ., Հայոց հին գրականութեան պատմութիւն, Նոյն, էջ 76:

Սակայն աչքի առջև ունենալով Շնորհալիի զանազան վկայութիւնները, միացնելով նաեւ անոնց՝ Մ. Ուռհայեցիի, Վարդան Պատմիչի եւ արդի ուսումնասէրներու հաղորդումները, կը հարկադրուինք ընդունելու երկու վանքերու յստակ զանազանութիւնը: Ծուղրի վանքին մէջ, որ իսկական Ծուղրի վանքն է ըսինք, եւ Մարաշի մօտերը կը գտնուի, Թաղուած է Բարսեղ Անեցի Կաթողիկոսը. իսկ Քեսունի Ծուղր Կարմիր Վանքին մէջ ալ Թաղուած են, ինչպէս պիտի տեսնենք, Գրիգորիս Վկայասէր Կաթողիկոսը եւ Գող Վասիլ հայ իշխանը, որուն սեփականութիւնն էր արդէն այդ մենաստանը⁸²:

Թէ՛ Շնորհալին, թէ՛ Մ. Ուռհայեցին եւ թէ՛ Վարդան Պատմիչ, իրենց գրութիւններու մէջ, Ծուղր Անապատը կը յիշեն եւ կը զանազանեն Քեսունի Կարմիր Վանքէն⁸³:

Վերեւ ըսինք՝ թէ Գրիգորիս Վկայասէր Կաթողիկոսը Ծուղրի Անապատին մէջ կը բնակէր. սակայն, երբ խոր ծերութեան հասաւ, Գող Վասիլ իշխանին եւ անոր կողակիցին կողմէ հրաւիրուեցաւ իրենց մօտ, Քեսուն երթալ, Կարմիր Վանքին մէջ բնակելու: Գր. Վկայասէր, հրաւէրը կ'ընդունի, եւ իր քեռորդի՝ Ապիրատ Պահլաւունի իշխանին երկու զաւակները միասին առնելով (որոնք իր հետ Ծուղրի Անապատը կը գտնուէին), կ'երթայ Քեսուն եւ Գրիգորն ու փոքր եղբայրը՝ Ներսէս (ապագայ Շնորհալին) Կարմիր Վանքի վանահայր՝ Ստեփանոս Մանուկ վարդապետի խնամքին կը յանձնէ:

Գր. Վկայասէրի մահէն յետոյ, Բարսեղ Կաթողիկոսն ալ յաճախ կ'այցելէր Ծուղր Անապատին մօտերը գտնուող Կարմիր Վանքը: «Այլ

82. Ծուղրի եւ Կարմիր վանքերու զանազանութիւնը շատ յստակ է նաեւ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ մօտ. հմտ. Տաքեգիրք, նոյն, էջ 128 եւ 142: Հ. Ալիշան ալ շատ յստակ կերպով երկու անջատ վանքեր կը նկատէ իր «Շնորհալի եւ պարագայ իւր» գործին մէջ. հմտ. նոյն, էջ 93 եւ 227: Վեր. ԵՂ. ՔԱՍՈՒՆԻԻ մօտ, սակայն, այս երկու վանքերու անջատումը շատ յստակ չ'երեւիր. տե՛ս Պատմութիւն հիմ հայ դաստիարակութեան, Պէյրուք, 1959, էջ 219:

Ծուղր Անապատի առնչութեամբ կ'արժէ յիշել արձագանգն ալ այն անհեթեթ ենթադրութեան, որ Ծուղրի Անապատը՝ Անտիոքի շրջանակին մէջ գտնուող ձեսրի Եւզուր վայրին մէջ կ'ուզէ որոնել եւ անոր հետ ալ նոյնացնել: Ծուղր Անապատը արդի ձեսրի Ծուղուրի հետ նոյնացնել ձգտողները թող խորհին՝ թէ Պհնեսիի մօտերը գտնուող Վարդահեր գիւղին մէջ, արկածի մը հետեւանքով մահացող Կաթողիկոսին մարմինը ի՞նչպէս կարելի էր այդ ժամանակի փոխադրութեան միջոցներով ու քաղաքական վտանգաւոր պարագաներու տակ՝ տանիլ մինչեւ Անտիոքէն անդին տեղ մը, եւ ինչո՞ւ Շնորհալին եւ Ուռհայեցին չեն յիշեր այդպիսի յուղարկւորութեան թափօրի մը երկա՞ր ու տաժանելի ճամբորդութիւնը... հմտ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ Թ. Ս., Եւզուրի Կաթողիկոսարանը, «Հասկ» (Անթիլիաս), Ժ. տարի (1941), Թ. 5-6, էջ 68-69: ՍԱՐԱՅԵԱՆ Գ., Նոյն, էջ 252:

83. Հմտ. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Բամբ չափաւ, էջ 598 եւ 604: Մ. ՈՒՆԱՅԵՏԻ, Նոյն, էջ 404, 411, 412, եւն.: ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉ, Նոյն, էջ 116 եւ 128:

Բարսեղ, կը դրէ Զամչեան, գտեղի կալեալ ի կողմանս Քեսունյ ի յանապատին Ծուղր կոչեցեալ, ստէպ զայր անդուստ ի Կարմիր վանսն՝ այց առնել աշակերտելոցն Ստեփանոսի»⁸⁴:

Իբրեւ վերջին դրական փաստ՝ թէ Քեսունի Կարմիր Վանքն ալ կը կրէր Ծուղր անունը, տեղ կու տանք Այադյաճեանի, որ խօսելով Քեսունի Կարմիր Վանքի մասին, կը դրէ. «Այս վանքը կը կոչուէր ՇՈՒՂՐԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ (տարբեր Մարաշի մօտ գտնուող ՇՈՒՂՐ ԱՆԱՊԱՏէՆ), ուր Գրիգոր Վկայասէր եւ Անեցի Բարսեղ Կաթողիկոս (1081-1113) ապրած են ժամանակ մը»⁸⁵:

Ամփոփելով այս բոլոր ըսուածները, կրնանք հաստատել թէ Կիլիկիոյ մէջ Ծուղր անունով երկու տարբեր վանքեր կային. առաջինը, որ իսկական Ծուղր վանքն էր՝ Եւզուր Անապատ կոչուած, «աթոռանիստ» Գր. Վկայասէր ու Բարսեղ Կաթողիկոսներուն, կը գտնուէր Մարաշ քաղաքի մօտակայքը: Իսկ երկրորդ Ծուղրը, կարելի է իբրեւ «մականուն» նկատել այն վանքին, որ մեզի ծանօթ է արդէն Կարմիր Վանք կամ Քեսունի Կարմիր Վանք անունով:

Կը խորհինք թէ արդի քանի մը հեղինակներու կողմէ այս մասին կատարուած չփոթութիւնը, թերեւս կարելի ըլլայ արդարացնել սա պարզ պատճառով՝ որ երկու վանքերն ալ, գտնուելով հանդերձ աշխարհադրական տարբեր, բայց իրարու մօտիկ վայրերու եւ դիրքերու մէջ, անկախաբար կրած են ՇՈՒՂՐ անուանակոչումը:

Իսկ Ծուղր անունին նշանակութեամբ՝ Տէր Ղաղարեան կրցած է որոշ բացատրութիւններ դնել: Իրեն համաձայն, Եւզուր՝ ասորերէն Սնոր բառին արաբական ձեւն է, որ յոգնակիի մէջ ՇՈՒՂՈՒՐ եղած է: ՍԱՂՐ = ՇԱՂՐ կը նշանակէ անցք, կիրճ, պատի մը ճեղք, կամ երկրի մը սահմաններուն մօտ գտնուող անպաշտպան հողամաս: «Մենք հայերս, կ'աւելցնէ Տէր Ղաղարեան, Սաղր ձեւը պահած ենք, Լամբրոնի մօտ գտնուող՝ Սաղրուր Սուրբ Աստուածածին վանքին համար»⁸⁶: Այս խօսքերուն հետեւելով, պէտք ենք եղբարկացնել, ուրեմն, որ Ծուղրի Անապատը եւ Քեսունի Ծուղրի Կարմիր Վանքը շատ հաւանօրէն կ'իրճերու անցքը պաշտպանող բերդերու տեղ եւ կամ անոնց մօտ շինուած վանքեր էին, ինչպէս Տէր Ղաղարեան եւս կը հաւաստէ:

84. ԶԱՄՉԵԱՆ Հ. Մ., Պատմութիւն Հայոց, հտ. Գ., նոյն, էջ 26:

85. ԱԼՊՈՑԱՃԵԱՆ Ա., Պատմ. Մայրաքիտ Հայոց, էջ 637, ընդգծումները Ջեղինակէն: ԽՐԱՅԵԱՆ Կ., «Ապագայ եւ իր ընկերները» խորագիրով յօդուածի մը մէջ («Հայաստանի կոչման», ԼԱ. տարի, 1931, Թիւ 27, Յուլիս 4) Կարմիր Վանքին շուրջ հետեւեալ կը դրէ. «Բարաբարտունեաց անկումէն անմիջապէս ետքը ծաղկող մեր վանքերուն մէջ գովասանքի արժանի գերազանց վկայութիւն մը ունի Մարաշու մերձակայ Կարմիր Վանքը, որ կը կոչուի նաեւ Ծուղր կամ Քեսունի վանք»: Ծուղրի Անապատի մասին տե՛ս ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Կիլիկիայի վանքերը, էջ 267-269:

86. Հմտ. ՏԵՐ-ՂԱՂԱՐԵԱՆ Թ., Նոյն, էջ 84. հմտ. նաեւ էջ 86:

Քասունիի եւ Միքայէլ Ասորիի վերի վկայութիւններուն, եւ միա-
ժամանակ Պառլաւոյ, Շափիրիմ, Քարաշիքու եւ Պաղակահալ վան-
քերու խորթաձայն անուններուն վրայ:

Սեւ Լեւոն քանի մը վանքերու՝ նախապէս ասորական հաստա-
տութիւններ ըլլալու ենթադրութեան շուրջ կատարած մեր անդրա-
դարձումներն ու այդ ուղղութեամբ հաւաքած վկայութիւնները, կըր-
նան այժմ բաւականաչափ կերպով լուսարանել նաեւ Քասունի Կար-
միր Վանքին շուրջ կատարուած եղելութիւնն ալ, հաղորդուած մեղի
Միքայէլ Ասորիէ: Կարմիր Վանքն ալ շատ հաւանօրէն ունեցած է
միւս քանի մը հաստատութիւններու ճակատագիրը: Այլ խօսքերով,
Կարմիր Վանքը՝ Գող Վասիլ իշխանէն առաջ պէտք է որ դոյութիւն
ունեցած ըլլայ արդէն, իբրեւ ասորական կրօնական հաստատութիւն
մը, եւ նման ուրիշ քանի մը վանքերու, Գող Վասիլի օրով, երբ այդ
չըջանականներուն մէջ Հայերը դերակշիռ կ'ըլլան՝ քան ասորի հաստ-
տակութիւնը, վանքը կը «հայանայ» եւ կը դառնայ հայերու սեփա-
կանութիւն: Հետեւաբար, Քասունի Կարմիր Վանքին հիմնադիրը, իր
սեղմ իմաստով, չի կրնար Գող Վասիլ իշխանը եղած ըլլալ: Ծիշտ
պիտի ըլլար, թերեւս, որակել զինքը «հայացնող», «վերակենդանա-
ցնող» մակդիրով: Այս ուղղութեամբ Հ. Ոսկեանն ալ կ'արտայայտուի
գրելով. «Կարմիր Վանքի շէնքնողն եղած է Գող Վասիլ, որ դուցէ
դայն օտարներէն - Յոյներէն կամ Ասորիներէն - առնելով հայա-
ցուց»⁹⁷:

Գող Վասիլ, որուն իշխանութիւնը կը տարածուէր դրեթէ մին-
չեւ Մարաշ քաղաքը եւ դէպի հարաւ մինչեւ Հոռմկլայ, հովանաւո-
րելով Սեւ Լեւոն կոչուած բարձունքներուն եւ հովիտներուն մէջ հա-
մախմբուած կրօնական հաստատութիւնները, կը տեսնուի թէ, իր
վեհանձն եւ բարի նկարագիրով, նախանձախնդիր էր, իր ազնիւ տիկ-
նոջ հետ, ուսումնասիրական դարգացումի կեդրոն դարձնելու Քե-
սունի մօտ գտնուող իրեն սեփական Կարմիր Վանքը:

Վերադառնալով Միքայէլ Ասորիի հաղորդումին ա'յն մասին,
ուր կ'ըսուի թէ Գող Վասիլ՝ Կարմիր Վանքը Ասորիներէ առնելով
«Գրիգորիս Կաթողիկոսին տուաւ», Հ. Ակինեան հետեւեալը կը խոր-
հրդածէ. Գող Վասիլ, Քասունի մեծագոր իշխանը, ԺԱ. դարու եր-
րորդ քառորդին սկսած ըլլալով իր քաղաքական նուաճումները, Գրի-
գորիս Վկայասէր Կաթողիկոս, որ ճամբորդութեան մէջ էր այն շըր-
ջանին, չէր կրնար ներկայ եղած ըլլալ վանքին Ասորիներէ գրաւումի

97. ՈՍԿԵԱՆ, Հ. Հ., Կիլիկիայի վամբերը, էջ 225: Ոսկեան շատ հաւանաբար աչքի
առնել չէ ունեցած Միքայէլ Ասորիի բնագիրին մէջ գտնուող այդ կարեւոր
անցքը:

ժամանակ⁹⁸: Ամէն պարագայի՝ կարեւորը Կարմիր Վանքի Ասորիներէ
գրաւումն է, Գող Վասիլ իշխանին կողմէ:

Գող Վասիլ եւ իր տիկինը, Կարմիր Վանքը Գրիգորիս Բ. Վկա-
յասէր Կաթողիկոսին կրնան տրամադրած ըլլալ՝ ամէնէն կանուխ,
1100էն յետոյ: Շնորհալին այս մասին կ'ակնարկէ՝ երբ կը գրէ.

«Նոցա զհովիւն իւրեանց բերեալ,
Որպէս զհայր սուրբ յանձնեալ.
Ձոր ըսփոփմամբ ծերատածեալ,
Յաշխատութեանցըն հանգուցեալ»⁹⁹:

Գրիգորիս Վկայասէր Հայրապետը, իր կեանքի վերջին տարիներ-
ուն, Գող Վասիլի եւ իր տիկնոջ կողմէ կը հրաւիրուի Քասուն: Հայ-
րապետը, որ բոլորովին տարիքն առած էր, չի մերժեր իր վերջին
օրերը հանգիստ անցընել՝ խաղաղ եւ ապահով յարկի մը տակ: Մեղա-
ռաջելով Գող Վասիլի ընտանիքի ազնիւ հրաւերին, կու դայ Քե-
սուն, Գող Վասիլի «մայրաքաղաք»ը, եւ անոր մօտիկ Կարմիր Վան-
քին մէջ կը բնակի, ուր կը մահանայ եւ կը թաղուի ալ 1105ի Յու-
նիս Յին, Մատթէոս Ուռհայեցի Պատմիչին համաձայն¹⁰⁰:

Ձմռանը որ Գող Վասիլի իշխանութեան շրջանին, իր հովա-
նաւորութեան տակ ապաստանած էին նաեւ փախստական վանական-
ներ: Անոնց մէջ էր նաեւ երեւելի Ստեփանոս անունով դեռատի ա-
բեղայ մը, տասնեւութը տարեկան: Այս Ստեփանոսի մասին, որ հիմ-
նականին մէջ Կարմիր Վանքին ուսումնական սիւնը կը դառնայ, 1106
թուականի Յիշատակարան մը կը պատմէ. «Իսկ Մանուկ մի արեղայ
վանական քահանայ՝ անուն կոչեցեալ Ստեփանոս, որպէս թէ Ը եւ Ժ
ամաց (= 18), ունեալ գինն եւ գնոր կտակարանս աստուածաշունչ
գրոց վարդապետական ուսմամբ ի հօրեղբօրէ իւրմէ: Եւ ընդ այլ
փախստականսն եհաս ի գաւառն Քեսմայ (այսպէս), ի մեծանշակ
սուրբ ուխտն, որ կոչի Կարմիր վանք, որ էր իշխանաց իշխանին վաս-
լի, որ Գող Վասիլն կոչիւր յայլագգեացն, վասն նորին արիութեանն.
Եւ անդ եկեալ բնակեցաւ շնորհալին Ստեփանոս, ծածկելով գանունն
վարդապետական վասն մանկական հասակին»¹⁰¹:

98. ՀՃՄՈ. ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Մատենագրական հետազոտութիւններ, հտ. Ե., էջ 287:
Նախորդ էջին մէջ, Հ. Ակինեան կը տատամսի որ Արեգի ժամը Նոյն ըլլայ
Կարմիր Վանքին հետ: Սակայն այս կարծիքը որեւէ հիմ չունի:

99. Ն. ՇՆՈՐՀԱՆԻ, Բամբ չափաւ, Նայն, էջ 597:

100. ՄՏ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Նայն, էջ 372: ՎԱՐԴԱՆ. ՊԱՏՄԻՉ, Նայն, էջ 114: ՀՃՄՈ.
Նաեւ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Նայն, էջ 191:

101. ՅՈՎԱՆԵՍԻՆ Գ., Յիշատակարանք մեծագրաց, էջ 304-305: Նոյն Յիշատա-
կարանը, չնչին տարբերակներով, հրատարակած է նաեւ Հ. ԱԼԻՇԱՆ, Հայա-
պատում, էջ 377-378:

Ստեփանոս արքեպիսկոպոս չափ հաւանորէն Կարմիր Վանք տեղաւորուած է 1105էն առաջ, եւ Մատթէոս Ուռհայեցիի բացայայտ վկայութեան համաձայն՝ Գրիգորիս Վկայասէրի մահը 1105ին, տեղի ունեցած է Ստեփանոսի վանահայրութեան շրջանին: Վկայասէր Հայրապետի թաղումը տեղի կ'ունենայ նոյն Կարմիր Վանքին մէջ շատ հանդիսաւոր կերպով: Կը կատարուի Ստեփանոս վանահօր կողմէ, Գող Վասիլ իշխանի եւ հայ աւագանիի ներկայութեան¹⁰²: Ոմանք հիմնուելով Ուռհայեցիի «Եւ Տէր Ստեփանոս հայր վանացն արար ժողով ի վերայ գերեզմանին նորա, կրօնաւորաց եւ քահանայից, եւ հայրապետական պատուով յուղարկեաց զնա ընդ սուրբան» բացատրութեան վրայ¹⁰³, կ'ենթադրեն թէ Ստեփանոս վանահայրը, Վկայասէրի թաղումին առիթով, դամբանական մը յօրինած ըլլայ, որ սակայն մեզի չէ հասած: Սակայն այս կարծիքը կը մնայ տակաւին ենթադրութիւն մը սոսկ: «Քանի որ, կը գրէ Հ. Պ. Անանեան, դամբանական գրութիւնները, որոնք մեզի հասած են, գրուած ու կարդացուած են, սովորաբար, մահուան տարեդարձին կամ նշխարներու փոխադրութեան առիթներով, եւ ո'չ թէ թաղման ատեն»¹⁰⁴:

Ստեփանոս «Կարմիրվանեցի»ն, այսպէս կոչուած Հ. Ալիշանի կողմէ¹⁰⁵, ո'չ միայն Վանահայր, այլ միաժամանակ Կարմիր Վանքին անուանի «Ուսուցչապետ»ն էր: Ստեփանոս Վարդապետը, իր պերճախօսութեամբ շատերու հիացումը կը գրաւէ, իսկ ուրիշներու ալ նախանձը կը գրգռէ: Այս վերջինները իր մասին կը չարախօսեն Բարսեղ Կաթողիկոսին, դանդատելով թէ հազիւ մօրուքը բուսած՝ ուսուցիչ կարգուած է, եւ թէ համարձակօրէն եկեղեցւոյ մէջ կը քարոզէ: Բարսեղ Կաթողիկոս, իր հետն առած Մեղրիկ Սեւանցի եւ Կիրակոս անուանի վարդապետները, քննութիւն մը կը ստիպուի կատարել: Այցելութեան մը առիթով՝ կը ստիպեն որ Ստեփանոս երիտասարդ վարդապետը քարոզէ գիտնական վարդապետներու առջեւ, այն յոյսով որ պիտի չհամարձակի եւ հիմնականին մէջ պիտի խայտառակուի: Ստեփանոս Մանուկ խօսք կ'առնէ եւ համարձակօրէն կը քարոզէ Կաթողիկոսին եւ քննիչ վարդապետներուն առջեւ, իր առաւտարան եւ հողելից արտայայտութիւններով կը հիացնէ ներկաները: Բարսեղ Անեցի Կաթողիկոսը հրճուանքով կ'ողջագուրէ զինքը եւ ոգեւորուած կը յանձնէ անոր իր ծաղկեայ ոսկեղօծ հայրապետական դաւադանը, եւ յաջորդ օրն իսկ եպիսկոպոս կը ձեռնադրէ, ա-

102. Հմմտ. ՄՏ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Նոյն, էջ 372: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Նոյն, էջ 126:

103. ՄՏ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Նոյն, էջ 372:

104. ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՈՂՈՍ, Ս. Ն. Ծնորհալի Կաթողիկոս Հայոց, «Բազմավէպ», ՃԼԱ. (1973), Թիւ 3-4, էջ 343:

105. Ծնորհալի եւ պարագայ իւր, էջ 51:

նոր հողածուծեան յանձնելով Գող Վասիլի իշխանութեան ենթակայ բոլոր նահանգները¹⁰⁶:

Ստեփանոս Մանուկի ուսուցիչի եւ հոգեւորականի համբաւը կը ծաւալի եւ անոր ուսուցչութեան եւ վանահայրութեան շրջանին բազմաթիւ աշակերտներ կու գան Քեսունի Կարմիր Վանք, օգտուելու անոր առաքելաշունչ դասախօսութիւններէն: Այնուհետեւ, «Հասեալ ի հասակ կատարեալ, ժողովեցան առ նա աշակերտք բազումք: Եւ նա ոչ թէ վարդապետօրէն ուսուցանէր, այլ առաքելաշնորհ փչէր ի նոսա դբանն կենաց: Որ եւ մի էր յաշակերտաց նորա հօր եւ ամենագոյ վարդապետս Սարգիս, որ եւ գրեաց զԿաթողիկեայց մեկնութիւնս, եւ ընկեր էր սորին եպիսկոպոսն Իգնատիոս, որ գրեաց ըզմեկնութիւնս Աւետարանին Ղուկասու, ի Շափիրին (Սեւ Լերան վանքերէն մին - Հ.Տ.Ե.) յայտնեալ ի շնորհացն Աստուծոյ, եւ այլ եւս երկու եղբարք Գրիգորէս եւ Ներսէս, որդիք Ապիրատայ իշխանին»¹⁰⁷:

Պէտք ենք ընդունիլ որ Կարմիր Վանքը կրթական բարձրագոյն կեդրոնի մը վերածուած է Ստեփանոսի առաջնորդութեան տակ, ուր պատրաստուած են իրապէս որակաւոր վարդապետներ, առնելով հոն ո'չ միայն դարուն պահանջած բարձր ուսումն ու կրթութիւնը, այլ անոր կողքին՝ նաեւ կրօնական բարձր մակարդակի նկարագիր: Ստեփանոսի բազմաթիւ աշակերտներէն, մեզի ծանօթ են այժմ, Ներսէս Ծնորհալիի մեծ եղբայրը՝ Գրիգոր, ինքը՝ Ներսէս Ծնորհալին, Սարգիս Ծնորհալի, Իգնատիոս Ծնորհալի եւ Բարսեղ Ծնորհալի վարդապետները: Այսքան միայն: Ինչպէս կը տեսնուի, Ծնորհալի մակդիրը, որոշիչ պատճառները պէտք է եղած ըլլայ Կարմիր Վանքի վարդապետներուն, կամ լաւ եւս ինչպէս Ստեփանոս Վարդապետի՝ նմապէս անոր աշակերտներուն, որոնք իրենց սրբակրօն նկարագիրով, սուրբ Գրային հմտութեամբ եւ գրական վաստակով արժանացած են այդ տիտղոսին, ինչպէս Քերթազ պատուանունին արժանացած են Սիւնիքի Դպրանոցին վարդապետները, եւ Իմաստասէր տիտղոսին՝ Արադածոտն դաւառի Դպրոցիները¹⁰⁸: Սակայն պէտք ենք նշել թէ

106. Հմմտ. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ Գ., Յիշատակարանք ձեռագրաց, էջ 304-306: ՍԱՐԳԻՍ ՎՐԻ. ԾՆՈՐՀԱԼԻ, Մեկնութիւն Եօթանց Թղթաց Կաթողիկեայց, Կ. Պոլս, 1826, էջ 6-8:

107. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ Գ., Նոյն, էջ 306:

108. ՕՐՄԱՆԵԱՆ այս մասին կը գրէ. «Ծնորհալի մականունին կրկնումը նշանաւորագոյն աշակերտներու վրայ, մտածել կու տայ թէ այդ կոչումը որոշիչ պատուանուն մը եղած է Ծնորհի կամ Քեսունի Կարմիր Վանքի աշակերտութեան մէջ, ինչպէս Գերթոզ պատուանունը Սիւնեաց Դպրոցին, եւ Իմաստասէր պատուանունը Արադածոտնի Դպրոցին յատկացեալ մակդիր անունի պէս գործածուեցան», նոյն, էջ, 1336, Թիւ 917: Հմմտ. միասին մեր ներկայ աշխատութեան Թիւ 101ի ծանօթութեան մէջ նշանակուած Յիշատակարանը, ուր ինքը՝ Ստեփանոս արքեպիսկոպոս արդէն Ծնորհալի կը կոչուի:

մեր ազգային պատմությունը միայն ներսէսի անձին վերապահած է այդ բացառիկօրէն իրեն պատշաճող ՇՆՈՐՀԱԼԻ մակդիրը:

Ներսէս Շնորհալիի երէց եղբայրը՝ Գրիգոր, Գրիգորիս Վկայասէր Կաթողիկոսի հոգածութեան եւ խնամքին կը յանձնուի: Գրիգորիս Վկայասէր կը վախճանի 1105ին, երբ Ներսէս շատ հաւանօրէն երեք տարեկան էր տակաւին (ծնած է 1102ին): Գրիգորիս Վկայասէր, որ այն ժամանակ հիւր էր Գող Վասիլի մօտ, Կարմիր Վանքին մէջ, զգալով թէ մօտալուս է իր մահը, կը կանչէ իր քեռորդին՝ Բարսեղ Աթոռակից Կաթողիկոսը եւ կը պատուիրէ որ երկու եղբայրները՝ Գրիգոր եւ Ներսէս Պահլաւունիները՝ իր մօտ եւ հոգածութեան տակ պահէ, իբրեւ եկեղեցականութեան արժանի թեկնածուներ, եւ Գրիգորի համար ալ կը պատուիրէ՝ որ յաջորդաբար կաթողիկոս կարգէ:

Բարսեղ Անեցի Կաթողիկոսը սիրով կը կատարէ Գրիգորիս Վկայասէրի հայրապետական փափաքը, եւ անոր մահէն անմիջապէս յետոյ, Ապիրատ Պահլաւունի իշխանին երկու զաւակները կը յանձնէ Քեսունի Կարմիր Վանքի՝ Ստեփանոս Մանուկ կոչուած Առաջնորդ վանահայրին, որուն շունչին տակ, ահա, իրենց ուսումն ու կրօնական կրթութիւնը կը ստանան Գրիգորիս Գ. եւ իր կրտսեր եղբայրը՝ Ներսէս Շնորհալին¹⁰⁹:

Գր. Յակոբեան, որ շահեկան մենագրութիւն մը նուիրած է Ներսէս Շնորհալիի կեանքին, գործունէութեան եւ գրական վաստակին, արդարացիօրէն կը գրէ. «Ստեփանոս Կարմիրվանքի գիտնականն ու Կարմիր Վանքին կից բարձրագոյն ուսումնարանն՝ հանդիսանում են այն անսպառ մտաւոր աղբիւրն ու դանձարանը, որտեղից առատօրէն Շնորհալին վերցրել է իր հոգեկան պաշարը՝ գործելու եւ ստեղծագործելու համար»¹¹⁰:

Յակոբեան համոզուած է թէ Ստեփանոս Մանուկ արեղայի ժամանումով, Կարմիր Վանքը «Կիլիկիայում հռչակում է որպէս բարձրագոյն դպրոց, ուր տարբեր ժամանակներում Արեւելեան Հայաստանից շատ վարդապետներ են գալիս այստեղ սովորելու եւ ստեղծագործելու: Այս վանքի համբաւն սկսեց դպրոցի առաջին ընթացաւարտներով, որոնց մէջ ամէնից շատ աչքի էր ընկնում Ներսէսի մեծ եղբայրը՝ Գրիգորը»¹¹¹:

Իսկապէս մեծ գովեստներով կը խօսուի Ստեփանոս Վարդապետի գիտութեան մասին: Դրական ու գործնական հանճարով եւ բազմակողմանի հմտութեամբ օժտուած այս կրթական մշակը, երիտա-

սարդ տարիքէն սկսեալ, նուիրուած ըլլալով դպրոցական աշխատութեան եւ ընկղմած ուսուցչական սրբազան ասպարէզին մէջ, գրաւոր արտագրութիւն մը չէ աւանդած մեզի, որպէսզի կարենայինք լրիւ գաղափար մը կաղմել եւ գնահատել զինք ա՛յնպէս ինչպէս որ պէտք էր: Սակայն, կը խորհինք թէ անմահացած է արդէն ան իր անուանի աշակերտներուն անունով: Այսպէս, Իգնատիոս Վարդապետ կատարած է մեկնութիւն մը Ղուկասի Աւետարանին, Բարսեղ Վարդապետ ըրած է մեկնութիւն մը Ղուկասի Աւետարանին, Սարգիս նմանապէս ձգած է մեկնութիւն մը Մարկոսի Աւետարանին, Սարգիս Վարդապետ դարձեալ մեկնութիւն մը՝ Կաթողիկեայց Նամակներուն, Գրիգորիս Կաթողիկոս, Շնորհալիի մեծ եղբայրը, ձգած է քանի մը գեղեցիկ տաղեր եւ շարականներ, մեծապէս նպաստած ըլլալով նաեւ դրական կեանքի զարգացումին, եւ վերջապէս ինքը՝ Ն. Շնորհալին: Ներսէս Շնորհալին «Մանաւանդ, արդարացիօրէն կը գրէ Հ. Պ. Անանեան, իսկապէս պարծանքն է իր Ուսուցիչին: Անտարակոյս անոր մէջ կ'արտացոլայ Ուսուցիչին աստուածաբանական խոր եւ յստակ գիտութիւնը. ան փոխանցեց իր աշակերտին Հայ Եկեղեցւոյ բազմադարեան աւանդութիւնը՝ ծիսական, հոգեւորական, դաւանաբանական ու տեսական աստուածաբանութեան վերաբերող, որ Ն. Շնորհալին իրեն յատուկ մտքի յստակութեամբ եւ հանճարեղ պարզութեամբ գիտցաւ արտայայտել թէ՛ չափածոյ եւ թէ՛ արձակ գրութիւններու մէջ»¹¹²:

Մովսիսեան, Սեւ Լերան վանքերու եւ յատկապէս ուսումնական այս կեդրոնի մասին գրելով, կ'աւելցնէ նաեւ թէ «Կան յիշատակութիւններ այն մասին» որ այստեղ եղել է մեծ մատենադարան եւ յաճախ նրան յիշել են որպէս գրչութեան եւ մանրանկարչութեան օճախ»¹¹³: Տարակոյս չունինք եւ հիմնովին համոզուած ենք, որ իւ-

112. ԱՆԱՆԵԱՆ Հ. Պ., յիշ. յօդ., էջ 344: Կարմիր Վանքի կրթական գործունէութեան, ինչպէս նաեւ Ստեփանոս Մանուկ Վարդապետի ուսուցչական եւ դաստիարակչական գործունէութեան մասին, կարելի է տեսնել՝ ԱԼԽԱՆ Հ. Ղ., Ծնորդալի եւ պարագայ իւր, էջ 40-52: Նոյն, Սիսուամ, էջ 406-407: ԿՈՍՏԱՆԴՆՆԱՆ Կ., Հայոց վամբերը, Մոսկուա, 1886, էջ 53: ՕՐԱՄԱՆԻԱՆ, Ազգապատում, էջ 1336-1337, թիւ 917, էջ 1391-1392, թիւ 954: ԶԱՐԲԱՆԱԼԻԱՆ Հ. Գ., Պատմ. հիմ հայ դպրութեան, էջ 616-617: ԱԲԵՂԱՆ Մ., Հայոց հիմ գրականութեան պատմ., էջ 75-76: ՔԱՍՈՒՆԻ ԵՂ., Պատմ. հիմ հայ դաստիարակչութեան, էջ 220-221: ԱՃԱՌԻԱՆ Հ., Ազգամտւոյն բառարան, Հտ. Դ, Երեւան, 1948, էջ 610: ՅԱԿՈԲԵԱՆ ԳՐ., Ներսէս Շնորհալի, էջ 28-30: Իսկ Ստեփանոս Վրդ.ի աշակերտներու մասին տե՛ս ՏԱՇԵԱՆ Հ. Յ., Նոյն, էջ 751: ՔԻՊԱՐԵԱՆ Հ., Գ., Պատմութիւն հայ գրականութեան, Հտ. Ա, Վենետիկ, 1944, էջ 272-292, 294-295: Եւ ԶԱՐԲԱՆԱԼԻԱՆ Հ. Գ., Նոյն, էջ 618-647:

113. ՄՈՎՍԻՍԵԱՆ Ա. Խ., Ուրուագծեր հայ դպրոցի մանկավարժութեան պատմութեան, Նոյն, էջ 314: Այս առիթով թող ներուի մեզի անդրադարձնել թէ Մովսիսեան՝ կիլիկեան քանի մը հանրածանօթ վանքերու շարքին, կրնար նաեւ

109. Հմմտ. Վարդ Ս. Ներսէս Ծնորդալիի, Հրտ. Հայր Արշակ, «Սոփեթ Հայկական», Հտ. ԺԴ. Վենետիկ, 1854, էջ 29-30: Մ. ՈՒՌՀԱՆԵՆԻ, Նոյն, էջ 371-372: ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉ, Նոյն, էջ 114:

110. ՅԱԿՈԲԵԱՆ ԳՐ., Ներսէս Շնորհալի, Երեւան, 1964, էջ 29:

111. ՅԱԿՈԲԵԱՆ, ԳՐ., Նոյն, էջ 29:

րաքանչիւր մենաստան, մանաւանդ կրօնական այն հաստատութիւնները, որոնք ունէին նաեւ ուսումնական-կրթական սրբազան առաքելութիւն մը, անժխտելիօրէն ունէին նաեւ իրենց սեփական դարանը կամ մատենադարանը: Այս ուղղութեամբ Թէքէեանի հաղորդումն ալ կրնայ վկայել Կարմիր Վանքին մէջ ճոխ մատենադարանի մը գոյութիւնը եւ հետեւաբար միաժամանակ նաեւ գրչութեան արուեստին մշակումը. «Քեսունի Կարմիր Վանքը, կը գրէ ան, ժամանակաւ հռչակաւոր հայ ուսումնավայր մը եղած է, որուն ապացոյցն էր Պեսնիի հայ եկեղեցւոյ դարակներուն եւ եկեղեցականաց մատենադարաններուն մէջ հազարաւոր օրինակ հին ձեռագիրներու գոյութիւնը, որոնք փճացան Մեծ Եղեռնին՝ քաղաքի 500 ընտանիք հայ բնակչութեան հետ»¹¹⁴:

Ուշագրաւ է նաեւ այս Դպրոցի կրթական գործունէութեան մէջ նկատի առնուած գիտական նիւթերու զանազանութիւնն ու ճոխութիւնը: Շատ հաւանական է որ մեր միջնադարեան միւս կրթական հաստատութիւններու զուգահեռ կ'ընթանար նաեւ Քեսունի Կարմիր հանրաժանօթ վանքը: Մովսիսեանի գործէն քաղելով, կը ներկայացնենք պարբերութիւն մը, այդ ուղղութեամբ ամբողջական դադափար մը տալու մտահոգութեամբ.

«Մի իսկական վարդապետական, հոգեւոր բարձր դպրոց, ուր բացի կրօնական, աստուածաբանական առարկաներից, դասաւանդուած էին նաեւ «արտաքին, իմաստասիրական» գիտելիքներ: Այստեղ հաւաքուած էին «ուսում եւ ընթերցում բազում արանց»: Ներսէս Շնորհալու ուսած առարկաները կազմում են այս դպրոցի ուսման ծրագիրը. ուսուցանում էին Ս. Գիրքը, կրօնի եւ եկեղեցու պատմութիւնը, արտաքին գիտութիւններ, տոմարագիտութիւն, երաժշտութիւն եւ «վայելչագրութիւն ի զանազան կերպս», ա'յլ խօսքերով ասած, գրչութեան արուեստը»¹¹⁵:

1112 թուականին կը վախճանի Գող Վասիլ մեծահոգի իշխանը եւ կը թաղուի Կարմիր Վանքին մէջ, մեծ սուգի մատնելով իր շուրջն հաւաքուած իշխանները, Կաթողիկոսն ու հոգեւորական երախտապարտ բազմութիւնը: Մատթէոս Ուռհայեցին կը գրէ. «Յայսմ ամի Վասիլ, եւ եղեւ սուգ սաստիկ ամենայն տանն Հայոց. վասն զի առ նա էին ժողովեալ մնացեալ զօրքն Բագրատունեաց եւ Պահլաւունեացն, եւ որդիք թագաւորացն Հայոց, հանդերձ ազատագունդ զօրօքն առ նա կային հանգուցեալ մեծաւ փառաւորութեամբ. եւ ա-

Կարմիր Վանքի պատմութեան գեղեցիկ համադրումը տալ. սակայն լուկ հպանցիկ ակնարկով մը բաւականացեր է:

114. Թէքէեան Ա., Պեսնիմ եւ Քեսունը, յիշ. յօդ., էջ 287:

115. Մովսիսեան Ա. Խ., Նոյն, էջ 313:

թոռ հայրապետութեանն Հայոց աշխարհին աստ եղաւ, վասն զի տիրեալ էր բազում գաւառաց իւրով զօրութեամբն, եւ ամենայն երամբ կրօնաւորաց, եպիսկոպոսաց, հարց եւ վարդապետաց առ սա ժողովեցան եւ առ հասարակ կային մեծաւ ուրախութեամբ: Մեռաւ իշխանն Հայոց եւ թաղեցաւ ի Կարմիր Վանքն. եւ էր հոգեբարձու նորա եւ հայր խոստովանութեան Տէր Բարսեղ Կաթողիկոսն Հայոց»¹¹⁶:

Բարսեղ Անեցի Կաթողիկոս, որ իր մօրեղբօր Գրիգորիս Բ. Վկայասէրին յաջորդած էր, Գող Վասիլի մահէն շուրջ տարի մը յետոյ, արկածի մը հետեւանքով, 1113ին կը մահանայ նաեւ ինքը, ինչպէս Ուռհայեցի Պատմիչը կը պատմէ: Մինչ Պեհեանիի սահմաններուն մէջ Վարդահեր գիւղը կը գտնուէր, կիրակնամուտի ժամերգութեան պահուն, որ տեղի կ'ունենար տանիքի մը վրայ, շատ հաւանօրէն օգիջեմութեան պատճառով, բազմութեան ծանրութեան տակ՝ տանիքը կը կքի եւ Բարսեղ Կաթողիկոս վար կ'իյնայ՝ ողնաշարը ծանրապէս վտանգելով: Իր խնդրանքին վրայ կը փոխադրեն զինքը Մարաշի մօտ գտնուող Շուղր Անապատ, որու մասին անդրադարձանք արդէն նախընթացաբար: Այդ վիճակին մէջ, Գրիգորիս Վկայասէր Կաթողիկոսին փափաքը կը կատարէ, եպիսկոպոս ձեռնադրելով Ն. Շնորհալիի մեծ եղբայրը՝ Գրիգոր եւ իրեն իբրեւ յաջորդ կը կարգէ: Երեք օր յետոյ, դժբախտ Հայրապետը կը վախճանի եւ կը թաղուի նոյն Շուղր Անապատին մէջ¹¹⁷:

Բարսեղ Կաթողիկոսի մահէն անմիջապէս յետոյ, կը շարունակէ գրել դարձեալ Ուռհայեցին, ժողով կը գումարուի Կարմիր Վանքին մէջ եւ Կաթողիկոսն կը ձեռնադրուի Ապիրատ Պահլաւունիի որդին՝ Գրիգորը, երէց եղբայր Ն. Շնորհալիի, շատ երիտասարդ տարիքին¹¹⁸: Գրիգոր Գ. Պահլաւունի (1113-1166) շուրջ քսան տարեկան երիտասարդ մըն էր, երբ կաթողիկոսական իշխանութեամբ կը յաջորդէ Բարսեղ Անեցի Կաթողիկոսին: Գրիգորի ընտրութեան լուրը շուտով կը հասնի Հայաստանի վանքերը. ամէն տեղ սիրալոյսով կ'ընդունուի նորընտիր Հայրապետը: Աղթամարի Դաւիթ եպիսկոպոսը միայն, որ նախապէս անկախութեան ձգտումներ ունեցած էր, Գրիգորի անչափահասութիւնը պատրուակ բռնելով՝ կ'առարկէ անոր ընտրութեան օրինաւորութեան դէմ. կ'ապստամբի եւ ինքզինքը կաթողիկոս կը յայտարարէ: Ասոր վրայ Սեւ Լերան վանական բազմու-

116. ՄՏ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Նոյն, էջ 404:

117. Հմմտ. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Նոյն, էջ 411-412: ՅՈՎՍԵՓԵԱՆՔ Գ., Յիշատակաբանք, էջ 421: Նշել կու տանք որ Յովսէփեանցի հրատարակած Յիշատակարանը Վարդեանի կը կոչէ գիւղը, հակառակ Ուռհայեցիի. իսկ Մմբատ Սպարապետի Տարեգրիքին մէջ նոյն դէպքին վայրը նշանակուած է Վարդերի գիւղը, Հմմտ. էջ 141-142:

118. ՄՏ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Նոյն, էջ 412:

Թիւնը ժողով մը կը դումարէ, Գրիգոր նորընտիր Կաթողիկոսի առաջնորդութեամբ՝ Կարմիր Վանքին մէջ, ուր՝ Ն. Շնորհալիի վկայութեամբ, կը հաւաքուին «Աւելի քան զերկու հազար զհինգ հարիւր անձանց, եպիսկոպոսաց, վարդապետաց, հարց վանականաց եւ միւր անձանց սրբոյ Լեւրին»¹¹⁹։

Քեսունի Կարմիր Վանքին համազգային ժողովը, միասնաբար կը հաւանի երիտասարդ Գրիգորի հայրապետական ընտրութեան. հետեւաբար, կը մերժէ եւ կը հերքէ Աղթամարի Դաւիթ եպիսկոպոսին փափաքներն ու ապօրինի ձգտումները¹²⁰։

Կարմիր Վանքի համազգային այս կարեւոր ժողովի մասին կ'արտայայտուի նաեւ Հ. Պ. Անանեան, գրելով, «Իսկապէս մեծի ժողով մը, որ մեր ներկայ ժամանակները հազիւ թէ կարելի ըլլայ դելուի հանել։ Եւ անհաւատալի պիտի համարէինք որ այդ օրերուն պատահած ըլլար նման բան, եթէ վկայողը չըլլար նոյն ինքն Ն. Շնորհալին»¹²¹։

Գրիգոր նորընտիր Կաթողիկոսը, հակառակ իր երիտասարդ տարիքին, կը ձեռնարկէ իսկոյն հայրապետական Աթոռին վերանորոգումի աշխատանքներուն։

1114ին տեղի կ'ունենար ահաւոր երկրաշարժ մը, որուն հետեւանքով կը կործանին Գող Վասիլի հողերուն եւ անոր շրջակայքին մէջ գտնուող բազմաթիւ քաղաքներ, որոնց մէջ Սաժուսատ, Հարսնաւոր, Քեսուն, Ռապան, Մարաշ, Անտիոք, եւ շուրջ քառասուն հազար մեռեալներու պատճառ կ'ըլլայ։ Միշտ միեւնոյն երկրաշարժին հետեւանքով, կը կործանին նաեւ Սեւ Լեւան շրջանակին մէջ գտնուող բազմաթիւ մենաստաններ, փրատակներու տակ առնելով հարիւրաւոր վանականներ¹²²։

Գող Վասիլ մեռած էր արդէն (1112ին) եւ գործնականին մէջ Քեսունի երկիրը սկսած էր անցնիլ Եդեսիայի՝ Պաղտին իշխանին, որ 1115ի վերջաւորութեան, կ'արշաւէր Գող Վասիլի իշխանութեան սահմանները, աւերելով եւ վտարելով բազմաթիւ հայ իշխաններ¹²³։

Այս բոլորը, Գրիգոր նորընտիր Կաթողիկոսի մէջ՝ Քեսունի Կարմիր Վանքէն հեռանալու բաւարար պատճառներ կը ստեղծեն, աւելի

119. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Թուղթ, Վեներիկ, 1873, էջ 184-185։

120. Հմմտ. ՉԱՄՁԵԱՆ Հ. Մ., Նոյն, հտ. Գ., ԳԼ. Է., էջ 37։ ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 65-67։ ՕՐՄԱՆԵԱՆ, Նոյն, էջ 1352-1354, Թիւ 929։ ԿՈԳԵԱՆ Մ., Հայոց եկեղեցիք, Պէտրոս, 1961, էջ 403-405։

121. ԱՆԱՆԵԱՆ Հ. Պ., յիշ. յօդ., էջ 346։

122. Հմմտ. ՄՏ. ՈՒՌԱՅԵՐԻ, Նոյն, էջ 416-417։ ՍՄԱՆՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Նոյն, էջ 143։ ՉԱՄՁԵԱՆ Հ. Մ., Նոյն, էջ 37-38։

123. Հմմտ. ՔԱՍՈՒՆԻ ԵՐՈՒԱՆԻ, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը մերձաւոր արեւելի քաղաքական հարաբերութիւններ, յիշ. աշխ., էջ 138-148։

առանձնացած եւ ապահով վայրի մը մէջ հաստատելու համար իր Աթոռը։

1116ին, որ Կարմիր Վանքէն փոխադրութեան ընդունուած թուականն է, Գրիգոր Պահլավունի Կաթողիկոս, դժբախտ պարագաներու տակ, իր հայրապետական Աթոռը վերջնականօրէն կը փոխադրէ Ծով դղեակ, որ կը գտնուի Այնթապի հիւսիս արեւմտեան կողմը, Տլուք գաւառի մէջ. այդ շրջանը կը գտնուէր ո'չ թէ Եդեսիոյ Պաղտինի իշխանութեան, այլ Անտիոքի կոմսութեան հողերուն մէջ։ 1116էն մինչեւ 1151 թուականը հայ Կաթողիկոսական նիստը կ'ըլլայ Տլուքի Ծով դղեակը, Քեսունի Կարմիր Վանքէն փոխադրուելէն անմիջապէս յետոյ¹²⁴։

Ներսէս իր երէց եղբոր՝ Գրիգոր Կաթողիկոսի Ծով դղեակ փոխադրուելէն ետքն ալ, կը մնայ տակաւին Կարմիր Վանք, շարունակելու համար իր սկսած ուսումները, Ստեփանոս Մանուկ Առաջնորդի ձեռքին տակ։ Շատ հաւանօրէն, ինչպէս կը կարծուի, այդ շրջանին տակաւին տասնեւչորս տարեկան պատանի մըն էր Ներսէս։ Յաջորդաբար, իր եղբայրը, Գրիգոր Կաթողիկոս տեսնելով անոր յառաջադիմութիւնը, շուտով զինքը սարկաւազի եւ ապա քահանայապետ աստիճանին կը բարձրացնէ, իր իսկ ձեռքերով օծելով տասնեւութը տարեկան Ներսէսը։

Անկէ յետոյ, Ներսէս պէտք է որ ձգած ըլլայ Քեսունի Կարմիր Վանքը եւ փոխադրուած Ծով դղեակ, իր Կաթողիկոս երէց եղբոր օժանդակելու համար։

Պէտք ենք ընդունիլ որ 1150 թուականէն յետոյ, երբ գործնականապէս Քեսունը՝ իր շրջակայ հողերով՝ Թուրքերու ձեռքը կ'անցնի, Կարմիր Վանքը՝ ենթարկուելով զանազան յարձակումներու եւ մահաբեր աւերումներու, հետզհետէ կը կորսնցնէ իր փայլը եւ կը սկսի անշքանալ։ Տեղն է նշել տալու նաեւ թէ Ստեփանոս Մանուկ վանահայրի վախճանը, պատմական ժլատ հաղորդումներու պատճառով, անծանօթ կը մնայ մեզի, դժբախտաբար։

1136 թուականին կը յիշուի Կարմիր Վանքը, երբ Մահմուտ Սուլթանը կու գայ եւ կը պաշարէ Քեսունը, կրակի տալով Գող Վասիլի այս սքանչելի քաղաքն ու զանազան մենաստաններ, որոնց կարգին

124. Բանասէրներու միջեւ Ծով դղեակի աշխարհաբան զիրքի մասին որոշ տարակարծութիւններ եւ դրապայքար տեղի ունեցած է։ Սակայն Հ. Պ. Անանեան, պատմական ստիյգ հաղորդումներու վրայ հիմնուած, վերջնական եզրակացութեան մը կը հասցնէ այդ խնդիրը, բացայայտօրէն իրարմէ անջատելով Չորթը Հայք նահանգի՝ Խարբերդի գաւառին մէջ գտնուող Ծովքը, եւ Արեւելեան Կիլիկիոյ՝ Տլուք գաւառի Ծով դղեակը, որ Գրիգոր Պահլավունիի կաթողիկոսական Աթոռը եղաւ մինչեւ 1151 թուականը, Հոռմաշիւ փոխադրութեան անմիջապէս յետոյ. Հմմտ. ԱՆԱՆԵԱՆ Հ. Պ., յիշ. յօդ., էջ 333-336 եւ 346-350։

նաեւ «Այրեաց զԿարմիր Վանքն՝ զտունն աղօթից, զխրճիթս միանձանց, զնշանս մանրեալ տէրունական փայտից եւ քարանց, զերի վարեալ, եւ զերկաթեղէնս եւ զպղնձեղէնս յերկիր կործանեալ, զսեղանսն սրբութեան հացի փշրեալ, եւ զդուռն զեղեցկահիւս յօրինուածոյ եւ զայն ընդ ինքն բարձեալ տանելով յաշխարհն իւրեանց ի տես հարճից եւ ռամկաց»¹²⁵։

Տասնեակ մը տարիներ զարձեալ լուծիւն կը տիրէ, եւ ահա 1148ին (Յունուար 30ին), Կարմիր Վանքի Ս. Յարութիւն եկեղեցիի գմբէթին՝ Գող Վասիլի կողմէ կանգնուած հրաշալի խաչը «Հրացեալ իբրեւ լոյս» կ'երեւի եւ չարագուշակ նշան մը կը համարուի քրիստոնեաներու համար¹²⁶։

Յաջորդաբար, 1215ին, Քեսունի մէջ կը դրուի Ճառնտիր մը, որուն մէջ կը գտնուի նաեւ Ս. Եփրեմ ասորիի ճառերու հայերէն տրեւէն բնագիրին հետ, ինչ որ ցոյց կու տայ թէ ԺԳ. դարու առաջին շրջանին, մտաւորական շարժումը զոյգութիւն ունէր եւ Գրիգորիս Բ. Վկայասէրի օրերուն ստեղծուած խանդավառութիւնը կը փետուն ըսելով, կարելի է արդեօք Կարմիր Վանք հասկնալ։ Շատ հաւանական է։ Չենք պնդեր, սակայն, որովհետեւ Յիշատակարանը այդ ուղղութեամբ ոչինչ կ'աւելցնէ։

1269 թուականով Յիշատակարան մը, իր կարգին, կը վկայէ թէ «ՌՄԿԹ» (= 1269) փլան ի շարժէ Սարվանտիքարն եւ Համուան եւ Դեղնքարն եւ այլ վանորայք եւ ամրոցք եւ գեղորայք ի Սեւ Լեռն»։ Չենք զիտեր, սակայն, Կարմիր Վանքն ալ անոնց հետ վնասի ենթարկուած է թէ ոչ¹²⁷։

Կարմիր Վանքի մասին պարզ յիշատակութիւն մը կը գտնենք նաեւ 1311 թուականին, առանց նորութիւններու¹²⁸։ Նմանապէս յիշատակութիւն մը 1439ին, Յայսմաւուրքի մը մէջ, եւ 1458ին Սարգիս Շնորհալիի Կաթողիկեայց նամակներու ընդօրինակութեան մը մէջ¹²⁹։

125. ՄՏ. ՌԻՌՀԱՅԵՑԻ, Նոյն, էջ 462-463։ Հմմտ. նաեւ ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 98։

126. Հմմտ. Ուռհայեցիի պատմութեան շարունակող՝ ԳՐԻԳՈՐ ԵՐԵՑ, տե՛ս ՌԻՌՀԱՅԵՑԻ, Նոյն, էջ 503-504։

127. ՅՈՎԱԿԻՄԵԱՆՑ Գ., Նոյն, էջ 780։

128. ՅԱԿՈԲԵԱՆ Վ. Ա., Մանր ժամանակագրութիւններ, հտ. Բ, էջ 74։

129. ՏԵ՛Ս ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Յուցակ հայերէն ձեռագրաց ի Լվով եւ ի Ստամբուլով, Վիեննա, 1961, էջ 7։

130. ՏԱՇԵԱՆ Հ. Յ., Յուցակ, էջ 25, 502 եւ 751։ 1443 թուականէն Յիշատակարան մըն ալ, որու հարազատութեան մասին տարակոյտներ կը յայտնէ Լ. Նաչիկեան, Ծով գղեակին հետ Կարմիր Վանքն ալ կը յիշէ. տե՛ս ԺԵ. Գաբի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, հտ. Ա. Երեւան, 1955, էջ 558-559։

Այդ շրջանէն առդին, Քեսունի Կարմիր Վանքին անունը, Շնորհալիի փառաւոր վանքը, պատմութեան ցաւալի մէկ կարգադրութեամբ, կը մնայ մշուշի մէջ։

1849ին Գառնեցի Յովհաննէս վարդապետ մը, որոշ ճիւղեր կը թափէ Կարմիր Վանքը վերակենդանացնելու համար, նոյնիսկ նիւթական ծախսերն ալ անձնապէս հողալով, սակայն իր ջանքերը կը մնան անարդիւն, որովհետեւ ո՛չ Սիսի Միքայէլ Կաթողիկոսը եւ ո՛չ ալ Պատրիարքարանը կ'օգնեն իրեն¹³¹։

Արսլանեան Սրբազան, խօսելով Մելիտինէի աւերակ վանքերու մասին, կը հաղորդէ նաեւ թէ Կարմիր Վանքը կողոպուտի ենթարկուած է շատ յաճախ, եւ անոր պատկանող հողերն ալ դրաւուած. կը հաղորդէ նաեւ թէ Կարմիր Վանքին արդի անունը դարձած է Գառնակեր¹³²։

Պեհեսնիէն դէպի Հոռմկլայի Ս. Ներսէս Շնորհալիի վանքը դաշող ուխտաւորները, աւանդաբար՝ պատմական Կարմիր Վանքի աւերակներուն մէջ կ'իջեւանէին, մատուցանել տալով հոն մատուցներ եւ Պատարագ¹³³։

Այստեղ կ'աւարտին, զժրախտաբար, Կարմիր Վանքի մասին մեր ունեցած ծանօթութիւնները, մեծ տխրութեամբ համակելով մեզ։ Անցեալին՝ ասուպային գեղեցիկ պայծառութեամբ մը փայլեցաւ Քեսունի Կարմիր Վանքը, պահ մը իմացական օրրանը դառնալով մեր լուսաշող եւ անմոռանալի քանի մը մեծ Հայրապետներուն, ու վերջնականօրէն քաշուեցաւ անյայտութեան մշուշին մէջ, ուրկէ անակընկալօրէն, ճառագայթի մը ջերմութեամբ դուրս եկած էր բարբառտիկ օր մը մեր պատմութեան։

Հ. ՏԱՃԱՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ

(Վերջ)

131. Հմմտ. ԳԱԼՈՒՍԵԱՆ ԳՐ., Մարաշ, էջ 234։

132. Հմմտ. Պատարիկներ լուսածիր շարաքացեալ վանքերէն, «Բաղմալէպ», ՂԵ. (1937), թիւ 12, էջ 299։ ՏԵ՛Ս նաեւ «Ծաղիկ», 1893, էջ 89։

133. ԹԵ՛ՐԵՅԵԱՆ Ա., Պեսնիք եւ Քեսունը, յիշ. յօդ., էջ 287։